ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/43

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝
«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ղ. Բարիկյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.05.2019թ. թիվ 26/26-1/8173-2019 գրությամբ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 10.05.2019թ. թիվ 01/61-8550 գրության հիման վրա, 17.05.2019թ. «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 10.05.2019թ. թիվ 01/61-8550 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Մագիստրալ նախագիծ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Կատարող) միջև 31.01.2019 թվականին կնքված ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/15-1 ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է քարթրիջների լիցքավորման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

Պայմանագրի 1.2 համաձայն՝ «Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով»:

Պայմանագրի արժեք է սահմանված 1380 (մեկ հազար երեք հարյուր ութսուն) ՀՀ դրամ: Երևանի երերունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը 11.03.2019 թվականին հ, 24/1-10/4195ել և 20.03.2019 թվականին հ. 24/1-10/4794ել գրություններով դիմել է Կատարողին հերթական պատվեր առաջադրանքով, սակայն վերջինիս կողմից չեն իրականացվել պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել

գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան»:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ «Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից»:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Կատարողի կողմից խախտվել են պայմանագրով ստանձնած պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվել է կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությունով, առաջարկում եմ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

3. <u>«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 21.05.2019թ. գրությամբ դիմել է «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.05.2019թ. թիվ 26/26-1/8173-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ ստացել ենք Ձեր կողմից 21.05.2019թ. ուղարկված էլեկտրոնային գրությունը՝ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին (պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան, ծածկագիր՝ «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/15-1») գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ, ինչի հետ կապված ներկայացնում ենք մեր դիրքորոշումը:

1. Մեր կարծիքով պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի կողմից կնքվել է ՀՀ օրենսդրության խախտմամբ, քանի որ պայմանագրի կողմ՝ Երևանի քաղաքապետարանի անունից, հանդես է եկել Է.Կիրակոսյանը (պայմանագրի առաջին մասում նշված է, որ Է.Կիրակոսյանը գործում է Երևանի քաղաքապետարանի կանոնադրության հիման վրա), սակայն Երևանի քաղաքապետարանի կայքում https://www.yerevan.am/am/elders-decisions/18-a-1/ տեղադրված Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 13-ի N18-Ա որոշմամբ հաստատված ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ կանոնադրության մեջ նման լիազորություններով օժտված պաշտոնյա կամ անձ չկա: Հաշվի առնելով վերոգրյալը, կարծում ենք, որ տվյալ պայմանագիրը կնքվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 296 հոդվածի 1-ին մասի խախտմամբ և օրենսգրքի 303 և 306 հոդվածների 1-ին կետերի և 314 հոդվածի համաձայն այն համարվում է առոչինչ գործարք: Հետևաբար Երևանի քաղաքապետարանը չի կարող որևիցե պահանջ ներկայացնել առոչինչ գործարքի հետ կապված:

2. Պայմանագիրը կնքվել է Երևանի քաղաքապետարանի և «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի միջև և պայմանագրի համաձայն որպես պատվիրատու հանդես է գալիս Երևանի քաղաքապետարանը, հետևաբար, ծառայությունների մատուցման պահանջ պետք է ներկայացնի միայն Երևանի քաղաքապետարանը՝ ի դեմս Երևանի քաղաքապետի:

Պայմանագրի շրջանակներում 15.02.2019թ. կնքված N 1 համաձայնագրի 1.4 կետի համաձայն պատվիրատուի միայն իրավունքներն ու պարտականություններն է իրականացնում Էրեբունի վարչական շրջանի աշխատակազմը: Պայմանագրով, համաձայնագրով կամ որևէ այլ լիազորություն սահմանող փաստաթղթով Էրեբունի վարչական շրջանի աշխատակազմին չի տրվել լիազորություն պայմանագրի շրջանակներում ծառայությունների մատուցման պահանջ ներկայացնելու, իսկ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն տվյալ պայմանագրի հետ կապված ծառայությունների մատուցման որևիցե պահանջ, որը ներկայացվել է Երևանի քաղաքապետի կողմից, չի ստացել: Հետևաբար, պայմանագրի համաձայն ծառայությունների մատուցման ցանկացած պահանջ, որը չի տրվել «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին Երևանի քաղաքապետի կողմից, պայմանագրի շրջանակներից դուրս է և ենթակա չէ կատարման: Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի գրությունները՝ ծառայություն մատուցելու վերաբերյալ չեն կարող դիտարկվել որպես ծառայության մատուցման պահանջ և դրանց չկատարումը չի կարող հանգեցնել պայմանագրով նախատեսված պատասխանատվության կիրառման համար:

3. Ձեր կողմից 21.05.2019թ. էլեկտրոնային նամակին կից ներկայացված փաստաթղթերի փաթեթում առկա է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի 25.04.2019թ. N 61/7552 գրությունը՝ ուղղված «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին, որը մենք չենք ստացել, և որում գնումների վարչության պետը հանդես է գալիս Երևանի քաղաքապետարանի անունից, իրականացնում է գործողություններ, որոնք Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 13-ի N18-Ա որոշմամբ հաստատված ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ կանոնադրության 21-րդ կետի 2)-րդ ենթակետի համաձայն Երևանի քաղաքապետի լիազորությունն են: Երևանի քաղաքապետի 14.11.2018թ. N3407-Ա որոշման 2-րդ կետով գնումների վարչության պետին վերապահվել են պատվիրատուի ղեկավարի լիազորությունները՝ միայն պայմանագրի կնքման մասով: Հաշվի առնելով, որ Երևանի քաղաքապետարանի գնումների վարչության պետն իրավասու չէ կայացնել պայմանագրի դադարման որոշում և գրություն ուղարկել պայմանագրի մյուս կողմին, պայմանագիրը չի կարող համարվել միակողմանի դադարեցված՝ իր համապատասխան հետևանքներով և հետևաբար առկա չեն հիմքեր գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգի նախաձեռնման կամ շարունակման:

4. Պայմանագրի միակողմանի դադարեցման որոշում կայացնելուց Երևանի քաղաքապետարանում հաշվի չեն առել, որ ծառայությունները մատուցված են և

պայմանագիրը պետք է միակողմանի լուծվեր միայն «ՉԿԱՏԱՐՎԱԾ» մասով, իսկ կատարված մասն էլ պետք է ընդունվեր և վճարվեր՝ վճարվող գումարին ավելացնելով նաև վճարման ուշացման համար հաշվարկված տույժերը:

5. Երևանի քաղաքապետարանը մուտք չի արել «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/15-1» ծածկագրով պայմանագիրը և պայմանագրի հետ կապված տեղեկատվությունը գնումների www.armeps.am համակարգ, ինչով խախտել է և 31.01.2019թ.-ից մինչ այսօր շարունակաբար խախտում է պայմանագրի 3-րդ կետը և հնարավորություն չի տվել և ներկայումս էլ չի տալիս «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին պայմանագրի 3.1 կետով սահմանված կարգով մատուցված ծառայությունների համար ներկայացնել հանձնման-ընդունման արձանագրությունները և ստանալ փաստացի մատուցված ծառայությունների դիմաց հասանելիք վճարը: Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի 05.03.2019թ. N 24/1-10/3895ել գրությանն ի պատասխան «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն 07.03.2019թ. N ԱՀ-08 գրությամբ տեղեկացրել է Էրեբունի վարչական շրջանի ղեկավարին, որ ծառայությունները մատուցվել են, սակայն մատուցված ծառայությունները հանձնելու հնարավորություն չկա, ինչին ի պատասխան Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը 11.03.2019թ. N 24/1-10/4195ել գրությամբ ընդունել է (չի նշել որևիցէ թերություն), որ ծառայությունները փաստացի մատուցված են պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մինչև 11.03.2019թ. և առաջարկել է մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման փաստաթղթերը հանձնել ոչ էլեկտրոնային եղանակով՝ խախտելով պայմանագրով սահմանված կարգը: «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն 12.03.2019թ. կազմել և նույն օրը Էրեբունի վարչական շրջանի ֆինանսական բաժին է ներկայացրել հանձնման-ընդունման փաստաթղթերը: Պայմանագրի 2.2.1 կետի համաձայն պատվիրատուն պարտավոր է քննարկել և ընդունել տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, սակայն պատվիրատուն խախտելով պայմանագրի 2.2.1 կետի պահանջը և 3.2 կետով սահմանված կարգը, առանց 3.3 կետով սահմանված բացասական եզրակացության տրամադրման, հետ է վերադարձրել «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի հանձնման-ընդունման փաստաթղթերը կից գրությամբ: Գրության մեջ պայմանագրով չսահմանված՝ անորոշ և անհասկանալի մեկնաբանություն է գրված, որը բացարձակապես չի բխում պայմանագրից և պայմանագրում չկա նման հիմք՝ մատուցված ծառայությունները չընդունելու համար: Պատվիրատուն խախտել է պայմանագրի 3-րդ բաժնով սահմանված ծառայության հանձնման-ընդունման կարգը, 2.2 բաժնով սահմանված Պատվիրատուի

պարտավորությունները և խախտմամբ օգտվել է 2.1 բաժնում սահմանված իր իրավունքներից, հետևաբար «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն 12.03.2019թ. կազմված և նույն օրը Երեբունի վարչական շրջանի ֆինանսական բաժին ներկայացված հանձնման-ընդունման փաստաթղթերը պայմանագրի 3.2 կետով սահմանված 15 աշխատանքային օրում պայմանագրի 3.4 կետի համաձայն չընդունելու դեպքում համարվում են ընդունված 03.04.2019թ.-ից սկսած և պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում, այն է 29.03.2019թ., ենթակա էին վճարման: Պատվիրատուն գործնականում խախտել է նաև պայմանագրի 2.2.2 կետը և «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին պետք է վճարի պայմանագրի 5.5 կետի համաձայն հաշվարկված տույժը:

6. Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում ծառայությունների մատուցման ընդհանուր քանակը սահմանված է 1 (մեկ), որն ամբողջությամբ մատուցված է, միավորի գինը սահմանված է 1380 և ընդհանուր գինը սահմանված է նույնպես 1380:»:

4. <u>ՍՑ-LO-2019/43 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի և «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի միջև 31.01.2019թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/15-1» ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 2-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել մինչև 25.12.2019թ.-ը:

Պայմանագրի հավելված 2-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ մատակարարումը պետք է կատարվի համաձայն գնորդի պահանջագրի՝ Սասունցի Դավիթ 87 հասցեով:

Երևանի քաղաքապետարանը 11.03.2019թ.-ին հ. 24/1-10/4195ել գրությամբ դիմելով «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին՝ հայտնել է հետևյալը. *«Ի պատասխան Ձեր*

էլեկտրոնային փոստով ուղարկած 07.03.2019թ. հ ԱՀ-08 գրության ևս մեկ անգամ տեղեկացնում ենք, որ համաձայն Երևանի քաղաքապետարանի և «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի միջև 31.01.2019թ. կնքված N ԵՔ-ԷԱՃԾՁՐ-19/15-1 ծածկագրով 15.02.2019թ. N1 համաձայնագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագրի շրջանակներում Ձեր կողմից պետք է լիցքավորվեր մինչև 500 (հինգ հարյուր) հատ քարթրիջ, սակայն լիցքավորվել է միայն 5 (հինգ) հատ քարթրիջ, ուստի խնդրում ենք ապահովել վերոնշյալ պայմանագրի 2-րդ մասի 2.4.1. կետի պահանջը:

Նշեմ նաև՝ ARMEPS համակարգում առկա խնդիրների պատճառով պայմանագիրը չի տեղադրվել կայքում, ուստի հանձնման-ընդունման փաստաթղթերը կարող եք ներկայացնել Երևան քաղաքի էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժին:»:

Մեկ այլ 20.03.2019թ.-ին հ. 24/1-10/4794ել գրությամբ Երևանի քաղաքապետարանը դիմելով Ընկերությանը՝ հայտնել է հետևյալը. *«Երևանի քաղաքապետարանի և «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի միջև 31.01.2019թ, կնքված N ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/15-1 ծածկագրով 15.02.2019թ հ. 1 համաձայնագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագրի համաձայն Երևանի էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում պետք է իրականացվեն համակարգչային սարքերի և սարքավորումների վերանորոգման ե սպասարկման ծառայություններ՝ մինչև 500 (հինգ հարյուր) հատ քարթրիջների լիցքավորում, ներառյալ բոլոր պահեստամասերի փոխարինում (թմբուկ, կառատրոն, ռաքել, դոզատոր, մագնիսական գլան, չիպ և կորպուս):*

Վերոնշյալ պայմանագրի գինը կազմում է 1 380 (մեկ հազար երեք հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ուստի անհրաժեշտ է ներկայացնել Ձեր կողմից փաստացի մատուցված թվով 5 (հինգ) հատ քարթրիջների լիցքավորման վերաբերյալ համապատասխան հաշիվ վավերագիրը, հանձման-ընդունման արձանագրությունը և ակտը:

Կից հետ են վերադարձվում Ձեր կողմից ներկայացված հաշիվ վավերագրերը, հանձման-ընդունման արձանագրությունները և ակտերը:»:

www.gnumner.am համացանցային կայքում 16.04.2019թ. հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի միջև 31.01.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/15-1» ծածկագրով պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի կողմից 25.04.2019թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 կետի ուժով (խախտվել է ծառայության մատուցման ժամկետը):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.05.2019թ. թիվ 26/26-1/8173-2019 գրությամբ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն' պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն' պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները

չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է քարթրիջների լիցքավորման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների»:

Պայմանագրի 1.2 համաձայն՝ «Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով»:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ …

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով

պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

Պայմանագրի հավելված 2-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել մինչև 25.12.2019թ.-ը:

Պայմանագրի հավելված 2-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ մատակարարումը պետք է կատարվի համաձայն գնորդի պահանջագրի՝ Սասունցի Դավիթ 87 հասցեով:

Երևանի քաղաքապետարանը 11.03.2019թ.-ին հ. 24/1-10/4195ել և 20.03.2019թ.-ին հ. 24/1-10/4794ել գրությունները դիտարկելով որպես Կատարողին ուղղված հերթական պատվեր առաջադրանք, միակողմանիորեն լուծել է Պայմանագիրը: Այն դեպքում, երբ Բողոքներ քննող անձն փաստում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին ուղղված վերը նշված գրությունները չեն կարող հանդիսանալ որպես ծառայությունների մատուցման համար պահանջ ներկայացնելու մասին վկայող ապացույցներ: Դրանք իրենց բնույթով գրագրություններ են, արտացոլում են Պայմանագրի կողմեր հանդիսացող Գնորդի և Վաճառողի իրավունք-պարտավորություն:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորության խախտում թույլ չի տրվել, որն էլ կարող էր հանգեցնել պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.05.2019թ. թիվ 26/26-1/8173-2019 գրությամբ «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**